# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

### ՀՐԱԶԴԱՆ

ՀՐԱԶԴԱ՛Ն, գետակդ իմ հայրենի
Հրազդան, ա՛յ ջրիկ իմ անուշիկ,
Ահա թողել զհողն օտարի
Բաքկէնս հասել եմ պանդըխտիկ.
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,
Ա՛յ ափունք, ե՞ր լայք լռիկ։

Ես ձեր դրացին եմ, չէ՞ք ճանչել,
Սիրտս ըզձեզ չէ մոռցել իսկի.
Դուք կարկըջիկդ ե՞ր էք մոռցել,
Ծփծղուն երեսդ ե՞ր սուգ ունի.
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,
Ա՛յ ափունք, ե՞ր լայք լռիկ։

Վա՛հ, մեր կանաչ անտառիկս ու՞ր,
Ու՞ր տաղւարիկս, ու՞ր մեր նըշխս,
Հովու՞ն եղան թէ ծովուն կուր,
Ու՞ր մեր տընակն, ու՞ր մեր այգիս.
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,
Ա՛յ ափունք, ե՞ր լայք լռիկ։

Ու՛ր ես աչիցըս լոյս Խանտուկ,
Իմ ընկերներն ու՞ր են Հրազդան.
Միթէ Պարսիկ տարաւ գերուկ,
Միթէ ամէնքն 'ի հո՞ղ դարձան.
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,
Ա՛յ ափունք, ե՞ր լայք լռիկ։

Ա՛հ, անցուցնաց եղել ամէն,
Ա՛հ անցուցնաց է Հայաստան,
Օ իս անմէկիկ թողած աստէն
Հետ անցնիս գնաս դո՛ւն այլ Հրազդան։ . . .
Ա՞նցիր գընա ջրիկդ հայրենի,
Արտասունք հերիք են Բաքկէնի։

ՆԱՀԱՊԵՏ